

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Դեկտեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: Հավարտ ս. պատարագի Մայր տաճարի լուսարարապետ գերշ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը մեծ երկրաշարժի 4-րդ տարելիցի կապակցությամբ քարոզ խոսեց: Ապա կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն՝ 1988 թ. երկրաշարժի զոհերի հիշատակին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Դեկտեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Դեկտեմբերի 19-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Դեկտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Արիս եպս. Ծիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Դեկտեմբերի 26-ին, շաբաթ.—Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին: Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց: Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռիս սարկավագները այցելեցին Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Սրբության հայրական օրհնությունները:

* * *

Դեկտեմբերի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: